ՆՈՐ-ԴԱՐ

№ 119 ՏԱՍՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ, Չորեքշաբթի, 14 Յուլիսի 1893 Չորեքշաբթի, 14 Յուլիսի ՏԱՍՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ, № 119

Տարեկան 10 րուբլի, վեց ամիսը՝ 6 րուբլի, երեք ամիսը՝ 3 րուբլի 50 կոպ.
Թիֆլիսում՝ ամիսը՝ 1 րուբլի, հասով 5 կոպեկի։
Բաժանորդ դրւում են Թիֆլիսում միմիայն խմբագրատանը։

Խմբագրութեան հասցէն Тифлисъ. Редакція „Норъ-Даръ“
или Tiflis. Rédaction „Nor-Dar“

Խմբագրութիւնը բաց է ամեն օր (բացի տօն օրերից) ժամը 9-ից մինչեւ 2-ը
Յայտարարութիւններն ընդունւում են ամեն լեզուներով։
Յայտարարութիւնների բառին 2 կոպ., րեկլամների համար կրկնապատիկը։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ամենայն Կաթուղիկոսի հաստատութեան առթիւ։

Քրոնիկոն. — Կ. Պոլսից։ Օր. Ն. Պապայեանի կոնցերտը Կովկասի բժշկական մասի կառավարչի հրաւէրը Շինական չափարանները Թիֆ. նահանգում Հին-Նախիջեւանից Թիֆ. բազաքագլխի նոր պաշտօնակատարը։ Տկուբուլիից։ Ատրպատեանից։ Ժժքաստ դէպք։ Հաղկոյի տակ մնաց սայլապանները։ Նուշուց։

Ռուսերի թերթերից։
Խաչատուր Աբովեան։
Նոմակ խմբագրին։
Ծայրայեղութիւններ։
Քաղաքական.—Սերբիա։ Պամիրի խնդիրը։ Սիամի խնդիրը։ Գերմանիա։
Քաղաքական լուրեր։
Խառն լուրեր։
Բանասիրական.—Տուդին։
Տեղեկատու։
Յայտարարութիւններ։

Նորին Վեհափառութեան Տ. Տ. Մկրտիչ Ամենայն Հայոց Կաթուղիկոսի հաստատութեան առթիւ փոխանակուած հեռագիրները։

Այդէն «Նոր-Դար»-ի մէջ հրատարակեցինք Նորին Վեհափառութեան մի հեռագիրը Դեր. Երեմիա Եալիսկոպոսին ուղղուած։ «Արարատ»-ի վերջին համարում հրատարակուած են նաև հետեւեալ հեռագիրները։

Տեղակալ Երեմիա Եալիսկոպոսին Էջմիածին.

Ստացայ նաև Ձեր վերջին հեռագիրը. գոհ ենք բոլոր միաբանութեան յայտնած սրտիական զգացմունքներից. ողջոյն և օրհնութիւն Հայրական մեր սիրելի որդիներին՝ Միաբաններին։

ՄԿՐՏԻՉ ԿԱԹՈՒՂԻԿՈՍ։

Առաջին հեռագիրը, Էջմիածնում ստացուած յունիսի 4-ին Երուսաղէմից։

Կայսերական կառավարութիւնը Հաղորդած լինելով ՄԵԶ ՄԵՐ Հաստատութեան վերջնական ձեւականութեանց կատարումը, սպասում ենք ալտեղում Ձեր պատգամաւորութեանը։ Հեռագրեցէք։

ՄԿՐՏԻՉ ԿԱԹՈՒՂԻԿՈՍ։

Առ ամենասպառիւ ԵՐԵՄԻԱ ԵՊԻՍԿՈՊՈՍ, Տէրակալ

Այս հեռագրին պատասխանուեց հետեւեալ կերպով, 4 յունիսի.

ՆՈՐԻՆ ՎԵՀԱՓԱՌՈՒԹԵԱՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՏԵԱՌՆ ՄԿՐՏՉԻ.

Որդիական ակնածութեամբ ի դիմաց իմ և համօրէն միաբանական ուխտի չնորհաւորելով զհաստատութիւն Ձեր ի Գահ Հայրապետութեան ամենայն Հայոց՝ մաղթիմք ի համբոյր սուրբ աջոյ Վեհափառութեանն Ձերոյ։

Ձունելով տակաւին զպաշտօնական տեղեկութիւն ի Կայսերական Կառավարութենէ Ռուսաց՝ հեռագրաւ դիմեցի առ Կառավարչապետն՝ խնդրելով զհրահանգութիւն վասն առաքման հրաւիրակաց։

ԵՐԵՄԻԱ ԵՊԻՍԿՈՊՈՍ։

Նոյն օրը հեռագրուեց Կառավարապետին.

Պարոն Կառավարչապետին քաղաքացիական մասի Կովկասի.

ՆՈՐԻՆ ՎԵՀԱՓԱՌՈՒԹԵԱՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՏԵԱՌՆ ՄԿՐՏՉԻ.

Ընդունելով զայտնութիւն Ձեր ի Գահ Հայրապետութեան ամենայն Հայոց՝ մաղթեմք ի համբոյր սուրբ աջոյ Վեհափառութեանն Ձերոյ։

Տեղակալ Կաթուղիկոսի ԵՐԵՄԻԱ ԵՊԻՍԿՈՊՈՍ։

Կառավարչապետի Դիւանից ստացուեց հետեւեալ պատասխանը.

Կառավարչապետի բացակայութեան պատճառով պարտք եմ համարում հաղորդել Ձեր Բարձր Սրբազնութեանը, թէ Կովկասի Գլխաւոր Վարչութիւնը չունի ԲԱՑԱՌԱԿՈՒԹՅՈՒՆ հրաման խրիմեան Աբգենիկոպոսի Ամենայն Հայոց Հայրապետ հաստատուելու մասին։

Գեներալ Լեյտենանտ Կոմս ՏԱՏԻՇՉԵՒ։

Այս պատասխանի հիման վրայ հեռագրուեց Երուսաղէմ.

Նորին Սրբութեան Մկրտիչ Կաթողիկոսին.

Կովկասու Կառավարչապետը չունի դեռ ևս Բարձրագոյն հրահանգ։ Սպասում ենք Նորից սպասել։ Խնդրում ենք հեռագրէք մանրամասնութիւնք վասն ապագայ գործառնութեանց։

ԵՊԻՍԿՈՊՈՍ ԵՐԵՄԻԱ

Սոյն մաքով ուղի մանրամասն հեռագիր ուղարկուեց և Երուսաղէմի Ամենապատիւ Ցարութիւն Պատրիարքին։

Նորից հեռագրուեց Երուսաղէմի Պատրիարքին։

Նորին Սրբութիւնը՝ Կաթուղիկոսը՝ մեկնել է արդեօք Երուսաղէմից դէպի Ռուսաստան, ինչպէս հաղորդում են լրագիրները և երբ։ Խնդրում ենք հեռագրէք մանրամասնութիւնք։ Մեր երկու հեռագիրները մնային առանց պատասխանի։

ՏԵՂԱԿԱԼ ԵՐԵՄԻԱ ԵՊԻՍԿՈՊՈՍ

Նորից ուղարկուեց Կառավարչապետին հետեւեալ հեռագիրը։

Լրագիրների հաղորդածին համաձայն ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹԻՒՆԸ ԿԱԹՈՒՂԻԿՈՍԸ դուրս է եկել Երուսաղէմից։ Ձունենալով պաշտօնական տեղեկութիւն և մեր կողմից աչքի առաջ ունենալով Նորին Սրբութեան հեռագիրը, որով պահանջում էր պատգամաւորներ ուղարկել Էջմիածնից՝ դանւում ենք դժուար դրութեան մէջ։ Խնդրում ենք հրահանգ։

ՏԵՂԱԿԱԼ ԵՐԵՄԻԱ ԵՊԻՍԿՈՊՈՍ

Կառավարչապետից ստացուեց հետեւեալ պատասխանը, յունիսի 22-ին։

Մկրտիչ Արքեպիսկոպոսը ԲԱՐԶՐԱԳՈՅՆ հաստատուած է Կաթուղիկոս։ Բարեհաճեցէք հաղորդելու ինձ թէ ուղարկում է արդեօք Սինօդը և ումը հրաւիրակ Կաթուղիկոսին ուղեկցելու համար։

Գեներալ Ադիւտանտ ՇԵՐԵՄԵՏԵՒ։

Պ. Կառավարչապետին պատասխանուեց, որ ըստ հնաւանդ սովորութեան, պատուիրակութիւնը պիտի գնայ անպատճառ այնտեղ, որտեղ գտնւում է Նորընտիր Կաթուղիկոսը, ուրեմն և անհրաժեշտ է ուղարկել հրաւիրականները մինչև Երուսաղէմ։ Բայց մինչև Երուսաղէմ հասնելը չնորհաւորական հեռագիրներ։ Այլ և հեռագրուեց Ռուսաստան բոլոր թեմերին, Պարսկաստան — Հնդկաստան և Պօլսի Ամեն. Պատրիարքին Նորին Վեհափառութեան հաստատութեան և առնուան յիշատակութեան համար։ Նոյնը հեռագրուեց մանրամասնաբար Երուսաղէմ։

Կառավարչապետից ստացուեց.

Էջմիածնի Սինօդի կողմից ՄԿՐՏԻՉ ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻՆ ողջունելու և ուղեկցելու պատուիրակութիւն ուղարկելուն ոչ մի արգելք չեմ գտնում։ Բարեհաճեցէք հեռագրել ինձ որոնցից է բաղկանալու և մեր է պնդում այդ պատուիրակութիւնը։ Եղած տեղեկութիւններին համաձայն Կաթուղիկոսը ուղևորուելու է Երուսաղէմից Տրիեստ, Աւստրիայով Օդեսա, Բաթում, Թիֆլիս։

Գեներալ Ադիւտանտ ՇԵՐԵՄԵՏԵՒ։

Ստացուեց Կառավարչապետի օգնականից.

Պատշաճաւոր կարգադրութիւնների մասին՝ որպէս զի հրաւիրակները առանց արգելքների ուղևորուեն Երուսաղէմ՝ յայտնուած է Երևանի Նահանգապետին։

Գեներալ Լեյտենանտ Կոմս ՏԱՏԻՇՉԵՒ։

Աւելորդ ենք համարում Նահանգապետի և այլ վարչութեանց հետ փոխանակուած բազմաթիւ հեռագրերը առաջ բերել։

Ամենապատ. Տէր Ցարութիւն պատրիարքի հեռագիրը յունիս 25-ին։

Նորին Սրբութիւն Կաթուղիկոսը սպասում է այստեղ (Երուսաղէմում) Ձեր պատգամաւորութեանը։

Ստացուեցին վերջապէս Վեհափառ Կաթուղիկոսի վերեւում գրուած հեռագիրները։

Նորին Վեհափառութեան Տեառն Տեառն Մկրտիչ Առաջնոյ Սրբազնաստուրբ Կաթողիկոսի եւ Ծայրագոյն Պատրիարքի Ամենայն Հայոց։

Ի նուաստս Երեմիա եպիսկոպոսէ Ամենախոնարհ յայտարարութիւն։

Իզձ վսեմագանաց մերոց լցանըն-թրութեամբ և հաստատութեամբ ՎԵՀԱՓԱՌ ՏԵԱՌՆԴ ի Գահ ի յաջորդութիւն Սրբոյ Հօրն Մերոյ Գրիգորի Լուսաւորչին և ակնկատոյց մնամք գալաթան ՍՐԲՈՒԹԵԱՆԴ ի Մայր-Աթոռս։

Հրաման պատուիրանի, որ հեռագրաւ ՁԵՐՈՎ, հնաս առ իս վասն առաքելոյ զպատգամաւորութիւն յաս ՏԵԱՌՆԴ, լցոյց զմեզ անհուն բերկրութեամբ առեհակով միանգամայն և զարձանէ ամենայն խոչից և խութից, որք այսչափ ընդ երկար քաղցին զոգիս մեր։

Արդ՝ զօրացեալ ի համբաւն աւետաբեր և ընկալեալ ի Կայսերական Կառավարութենէն Ռուսաց պատասխանի կրկին և կրկին հեռագրաց իմոց, որով առաջի առնելով զպատուէր հրամանի ՎԵՀԱՓԱՌՈՒԹԵԱՆԴ գնամ պնդեաք ի դիտութիւն և յերկան ածել զհաճութիւնն Կայսերական, որ մինչև ցարդ զանխոս իմն մնայր ի մէնջ և չէր իւիք ի յայտնութիւն եկեալ, ձեռն արկաք առանց յապաղման ընտրել ի միաբանէ մերմէ զերիս արժանաւորս եպիսկոպոսական աստիճանի և յատչաւակութեամբ. և մուրիկից հաստկացողը չատ բաղդաւոր պիտի համարէ նրա երջանկութիւնը լսելով։

Հաւարակութիւնը քիչ էր Թատրոնում, որովհետև երգչուհին անծանօթ է և նրա մասին տեղեկութիւն չունի, բայց Նիկիտայի և այլ նշանաւոր երգչուհիների համար Թատրոն վազող հասարակութիւնը հոգեմտայութեամբ կըլսէ օր. Պալայեանին և չատ գոհ կըլինի, որ կարողացել է լսել այդպիսի մի նշանաւոր երգչուհու։

Օրիորդի ձայնը ցածրից սկսած ամենաբարձր նօտաները միակերպ դաշնական, պարզ են, վերին աստիճանի մեղմ, քաղցր, բայց և այնպէս միշտ լիքը հնչիւն մնալով. երբ նրա ձայնը բարձրանում է սուր աղաղակ, ծկլթոց չէ չատերի պէս, այլ իբրև սոխակի ձայն, բարձրութեան մէջ սաւառնում և ոլորում է, իսկ ցածրացրած պիանիսիմոն... միայն լսել է հարկաւոր, որ մարդ սքանչանայ և ըմայլի նրա ձայնից և արհեստի նրբութեան հասցրած կատարելագործութիւնից։

Ինչքան էլ կամենանք պակասութիւն որոնել օրիորդի երգեցողութեան մէջ, զարմանալի է, որ ոչինչ չենք գտնիլ, նոյնիսկ նրա արտաքին չարժման մէջ. ամեն կերպ մեր աչքն կանգնած է մի մինչև մանրամասն կատարելագործուած արտիստուհի՝ երկնքից ստացած ամեն կերպ զեղեցիկ և գուրեկան ձայնով։

Այդ իսկ պատճառով հենց առաջին երգից ամբողջ Թատրոնը թնդում էր ինքնաբեր, բուռն ծափահարութիւններով և այդ ծափահարութիւնների մէջ չկար, ոչ խաթրի, ոչ ողորմութեան և ոչ ազգասիրական ծափահարութիւն։

Երկար ժամանցկից յետոյ առաջին անգամն է, որ մենք մի հմայիչ և չնորհալի արտիստուհու երգեցողութիւնը լսեցինք։ Ամենաառաջնակարգ թեմերի զարդը կարող է լինել և կլինի օր. Պալայեանը իբրև առաջնակարգ երգչուհի։ Ուրախալի է, որ այդ երգչուհին Ատրպատեանի հայ ծնողների զաւակ է և աջողութեամբ երգում է Իտալիայի Թատրոններում։

Կովկասի բժշկական մասի կառավարիչը հեռագրով Թիֆլիս է հրաւիրել ներքին գործերի մինիստրութեան բժշկական դեպարտամենտի կողմից Կովկաս ուղարկուած բժիշկներին, որպէս զի խորհրդակցեն խոլերա երևան գալու միջոցին հարկաւոր միջոցներ գործ դնելու մասին։

Իսկ Թիֆլիսի ոստիկանապետի օգնականն էլ քաղաքը մի քանի մասերի է բաժանել և ամեն մի մասի վրայ իւր կողմից առողջապահական հսկող է նշանակել։ Բայց այդ, «Кав.»-ի ասելով, նա պատուիրել է քաղաքի բոլոր պլիսաւններին խիստ հսկողութիւն ունենալ ուտելեղէնների խանութների վրայ, որպէս զի ուտելեղէնները փոչուց ու ճանճերից պաշտպանուած լինին։

Վրաց «Իւէրիա» թերթը հետեւեալ տեղեկութիւններն է հաղորդում Թիֆլիսի նահանգում եղած չինական չափարանների մասին առ 1-ն յունուարի 1893 թուի։ Ախալցխայի գաւառի չափարաններն ունեցել են 48,083 պուդ հացահատիկ և 93,557 ր. փող. Ախալցխայի գաւառում կայ 26,463½ պուդ հացահատիկ և 10,621 ր. փող, Բորչա-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

(Ի. ՏԱՀԱՐՅԱՆԻ)

VIII.

Ա՛ստղիկ տատը վերջապես ել չդիմացավ տանը մնալու, ու ամեն առավոտ ել ավելի էր ձգտում դեպի Ա՛լագյազ։ Ամեն անգամ, երբ Ա՛լագյազ էր գնում, ասում էր, թե ինքն ել կգնա, բայց ամեն անգամ ել մի պատրվակ էր գտնում, որ չգնա։ Ա՛լագյազ գնալու համար ամենից առաջ պետք էր ունենալ ձի, իսկ ձի ունենալու համար՝ փող։ Ա՛ստղիկ տատը ոչ մի ձիու տեր չէր, ոչ էլ փող ուներ, որ ձի գներ։ Ա՛լագյազ գնալու համար ամենից առաջ պետք էր ունենալ ձի, իսկ ձի ունենալու համար՝ փող։ Ա՛ստղիկ տատը ոչ մի ձիու տեր չէր, ոչ էլ փող ուներ, որ ձի գներ։

տալէ ցաւերի աւելանում է։ Մի կողմ թողնելով բնիկների այդ սրամիտ, բայց դուցէ անհիմն նկատողութիւնը, մենք միւս կողմից կը հաստատանենք, որ իրաւ՝ բարոյականութիւնից և ազնուութիւնից դուրկ մի պաղ քամի օրէցօր աւելի տարածւում է այս կողմերում և կարծրացում, սառցնում է մարդկանց սրտերը դէպի ընդհանրութեան և ազգի շահերը և նրանց մի-մի «ոչչ արձան չինելով՝ անցօր է անում չահասիրութեան և եսամոլութեան նեղ չրջանից մի քայլ անդամ դուրս գալ և առաջ ընթանալ։ Ցաւալը չէ հասկանալը, թէ դիցուք այս ինչ կամ այն ինչ քաղաքում մի քանի անձերից բաղկացած մի մասնաժողով է ընտրւում ազգային կամ եկեղեցական գործերը կարգադրելու համար, իսկ այդ մասնաժողովի յարգելի անդամներից իւրաքանչիւրն իւր գործը ընդհանրութեան չահերից աւելի բարձր է դասում և մոռացութեան տալիս իրեն վրայ դրուած պատասխանատուութիւնները։ Ցաւալը չէ հասկանալը, որ չատ մարդիկ՝ բարեգործական նպատակով տուած մի քանի կոպէկները կորած են համարում, իսկ թղթախաղով կորցրած մի քանի տասնեակ րուբլիները—ոչ։ Կամ գուցէ դուք, պարոններ, թղթախաղը անբարոյականութիւն չէք համարում։ Մենք կարող ենք համաձայն ասել, որ չնորհիւ մի քանի օտարամուտ քամիների կան չատ մարդիկ, որոնք անձնական վնասն աւելի սիրով են ընդունում, քան ընդհանրութեան օգուտը։ Սա ծայրայեղ եսասիրութիւն է։

*

Կան քամիներ, որոնք վնասակար են, որովհետև վիչում են ապականութեամբ նախուած ճահիճներից. բայց կան և՛ քամիներ, որոնք օգտակար են, որովհետև մաքրում են մեզ չրջապատող մթնոլորտը։ Բայց չի կարելի մի հատուտ կանոն դնել նրանց համար և օգտակարի ու վնասակարի սահմանը որոշել։ Ցաճախ պատահում է, որ մեկին տեղից միաժամանակ փչում են երկու տեսակից էլ։ Այդ դէպքում հարկաւոր է մէկը միւսից զանազանել և միայն օգտակարի հոսանքին ենթարկուել։ Սակայն կան մարդիկ, որոնք կուրօրէն անձնատուր են լինում չուսաւորուած աչխարհ-իլ վիչած բոլոր քամիներին, ապդուելով աւազակէս վտանգից։ Սա էլ ծայրայեղ օտարամոլութիւն է։

*

Քամիները աւելի ներգործում են թոյլ առարկաների վրայ։ Եթէ մարդ ունի հաստատ և որոշ գաղափարներ, փչիր նրա վրայ որքան կամենաս, և նա հաստատ կըմնայ դարձեալ իւր առաջուայ գաղափարներին։ Բայց կան մարդիկ, որոնց մտաւոր աչխարհը ծովի նման անդադար չարժման մէջ է և չաճախ փոթորիկների է հանդիպում ու ալեկոծութիւն կրելով՝ ջրասոյզ լինում և բարոյապէս խեղդւում։ Վերջին հանգամանքն ամենից չատ պատահում է երիտասարդների հետ։ Դա մտաւոր ծայրայեղ լուսոլութեան հետևանքն է։

*

Ցայտնի է, որ չափազանց տաքութիւնն ու չափազանց ցրտութիւնը հաւասարապէս վնասակար են մարդուս հոգևոր կեանքի համար։ Տաք երկիրներում ընակուող մարդիկ աւելի թոյլ յիշողութիւն են ունենում, քան բարեխառն կլիմաներում եղողները, իսկ չատ ցուրտ երկիրներում ապրողները չեն կարողանում հասնել զարգացման բարձրագոյն աստիճաններին։ Կենդրոնական Աֆրիկայում մտաւոր չարժումը չատ դանդաղ է առաջանում, իսկ բնեռների մօտ ոչ մի կենդանի գոյութիւն ունենալ չէ կարող։ Սակայն աւելի լաւ է տաքը քան պաղը, որովհետև առաջինը միայն թուլութիւն է առաջ բերում, իսկ երկրորդը՝ մահ։ Պրանտ եղ բնութեան ծայրայեղութիւններն են։

*

Դրա մի պատկերը մենք տեսնում ենք և՛ մտաւոր աչխարհում։ Դէպի մի որ և է գաղափար սառնիկ սէր կամ չափից դուրս տաքութիւն տածելը չատ վնասակար է, որովհետև երկու դէպքումն էլ մարդ ծայրայեղութիւնների կարող է հասնել։ Միայն լուրջ քննութիւնն է, որ մարդուս կարող է աւելի հաստատ, բայց և աւելի չափաւորուած գաղափարներ ներչնչել, հետու ծայրայեղութիւններից։

Միակողմանիութիւնը չատ մարդկանց յատկանիշն է։ Ոչ միայն միջնակարգ, այլ և բարձրագոյն ուսում ստացածների մէջ չաճախ պատահում են միակողմանի ձգտումներ, ուր մնաց որ բուժուածների մէջ։ Կողմնապահութիւնը և հակառակ կուսակցութեան պատկանողների դէմ թշնամութիւնը չատերին վտանգի մէջ է ձգել։ Պատմում են, իբր թէ մօտ անցեալներում Անդրկասպեան երկրի քաղաքներից մէկում երկու հայի մէջ մի չնչին պատճառով կռիւ է ծագում։ Մէկը պաշպանում է մի թերթի, միւսը նրա հակառակը։ Թշնամութիւնն այնտեղ է հասնում, որ այդ երիտասարդներից մէկը միւսին մենամարտութեան է հրաւիրում։ Սա էլ նոտարական ծայրայեղութիւն է և առաջ է գալիս մտաւոր կարճատեսութիւնից և հակառակորդի արժանիքները գնահատելու անկարողութիւնից։ Չափազանց սէրն ու չափազանցատելութիւնը կոյր ծայրայեղութիւններ են։ Առաջինը սիրած առարկայի լաւ կողմերն է նկատում, երկրորդը՝ միայն վատերը։

*

Հասարակութեան մէջ երբեմն չրջան են առնում այնպիսի քամիներ, որոնք ժառանգական, դարերը գաղափարները չատ հեչտութեամբ արմատախիլ են անում և մարդուս զրկում իւր սիրած ու պաչտած առարկայից—հաւատքից։ Որքան մի որ և է երկրում առաջ է գընում վոլտաւորութիւնը, այնքան էլ չատանում են նրա մէջ խմատակ փիլիսոփաները, որոնք, հաղիւ ճանաչելով իրենց ժարմնի ամենագլխաւոր օրգաններն ու նրանց պաշտօնը, սկսում են զբաղուել իրենց խելքից չատ աւելի բարձր եղող խնդիրների քննութեամբ։ Այդ տեսակ կէս-գիտնական իմաստասէրները ժողովրդեան ցեցերն են և իրենց թոյնով ապականում են իրենց չրջապատողների մտաւոր և բարոյական կեանքը։

*

Անցեալները ես ծանօթացայ մի երիտասարդ լեհացու հետ։ Նա ծնուած ու մեծացած էր կաթոլիկ եկեղեցու ծոցում։ Իւր տարրական ուսումն ստանալուց յետոյ նա ծառայել էր Մոսկուայի հեռագրատան մէջ, բայց յետոյ արձակուել իւր պաշտօնից նոր այժ ստացած մի օրէնքի համաձայն։ Նա եկել էր Մոսկուայ իբրև մի ջերմ կաթոլիկ, բայց այնտեղից դուրս էր եկել լիքը դարվինական գաղափարներով։ Ո՞րտեղից ըստացաւ նա այդ գաղափարները։—Հարկաւ իւր ընկեր ծառայողներից, որոնք քրիստոնէութեան հակառակ խօսելն ու մտածելը նոր են համարում։ Ինձ ծանօթ դարվինականն ամեն կերպ աչխատում էր ապացուցանել, որ մարդը կապիկից է առաջ եկել։ Նա իւր գաղափարը հաստատում էր նրանով, որ այդ երկու կենդանիների կազմուածքի մէջ խիստ չատ նմանութիւններ կան, և որ կապիկների մի որոչ տեսակը—օրանգ-ուտանգները—ոչ միայն ունին իրենց յատուկ լեզուն, այլ և գնալով աւելի և աւելի զարգանում, են, այնպէս որ նրանք այժմ չատ տեղեր բնակուելի պէս են կատարում և դէպի գեղեցիկ սեռը տածում են նոյն զգացումները, ինչ որ մարդու։ Այդ հանգամանքներից հետևցնում էր, որ քիչ ժամանակից յետոյ օրանգ-ուտանգները բոլորովին կըկերպարանափոխուին և մարդ կըգառնան, ի հարկէ, ունենալով միայն նախնական մարդու հասկացողութիւնը. իսկ միւս կապիկները կըփոխուին նախ օրանգ-ուտանգների, իսկ յետոյ ապա և մարդկանց։ Քրիստոնէութիւնը նա համարում էր ոամիկներին սանձելու մի լաւ միջոց, որը զարգացած մարդու համար բոլորովին աւելորդ է։

Անկասկած Դարվինը և իւր հետևողներն ունեցել են իրենց հիմքերը և նրանց ասածը երկարատև ուսումնասիրութիւնների ու խոկման արդիւնք է։ Բայց ինչ հիմք ունին իրենք թէ նրան հետևող թեթևսոլիկները, կարդացել են դրանք Դարվինի գրուածքները, հասկացել են, և ինչպէս են հասկացել—ահա խնդիրը։

Դեռ մինչև այժմ էլ Դարվինի հանած եզրակացութիւնները ամենակատարեալ վէճերի և ընդդիմութիւնների նիւթ են կազմում։ Ոչ նուազ գիտնականներ և մասնագէտներ քան Դարվինը չեն խըղճերում բոլորովին համակարծիք չեն նրան։ Վեր առնենք հենց օրինակ գոյութեան կուռի կամ մարդուս ծագման թէօրիաները...։

Բայց միջին կարգի, հասարակ խելքի տէր ընթերցողն այդ չի հարցնիլ, դրա վրայ ուշադրութիւն չի դարձնիլ. նա լսում է, որ ասում են, թէ մարդս կապիկից է գուրս եկել—և ինքն էլ կըրկնում է՝ կապկօրէն, առանց մտածելու, առանց քննելու։ Գուցէ դա թէօրիա է, բայց գուցէ և սխալ է։

Այդ կարգի մարդիկ անալիզ անելու խելք չունին, նրանց խելքը թմրած է, պատրաստի եզրակացութիւնների է սպասում... ինչպէս և ամբոխը։

*

Ակնյայտ է, որ երիտասարդ լեհացին անգիտօրէն ինքն իրեն կապկի ծնունդ էր համարում և իւր նախահայրերին անբան անասունների կարգը դասելով՝ ինքն էլ նրանց արժանաւոր մի ժառանգը հանդիսանում։ Սա չարչինանութեան և մոլի ծաղրելու հետևանքն է։

Բայց կան և այնպիսի գիտնականներ, որոնք կամենում են խօսքով հաստատել, որ բոլոր չնչաւորները միևնոյն նախնական սաղմից են առաջացած, այնպէս որ միջատները, ձկները, թռչունները, գազանները, մարդիկ—բոլորն էլ միևնոյն նախահայրերն են ունեցել և տարբեր ժամանակների, տարբեր կլիմաների և ուրիչ հանգամանքների չնորհիւ է, որ այդ նախնական սաղմը բազմաւորուել և այսքան հազարաւոր այլազան կենդանիներ արտադրել։ Սա էլ պրիմորդիալ ծայրահեղութիւն է։ Ուրանալով Աստուծուն, այդ մարդիկ աչխատում են ստեղծագործութիւնը մի այլ պատճառի վերագրել, և այդ կերպով ընկնում են մոացածին եզրակացութեան (աւելի ճիչտն ասած՝ կամաւոր անբջային երևակայութեան) մէջ։

Դա համաձայն է մեզանում տարածուած ազատամտութիւն, նախապաչարմունքից ազատ լինել։ Դրանք պարծենում են, թէ

կուղղ մարդիկ ենք, ուստի չենք կարող այդպիսի մեծ խելքերի, ինչպէս ձերն է, թուխչքին հետևել...։ Ինչ որ ձեզ անկեղծ է թւում—մեզ ձանձրալի և անհամեստ է երևում...։ Ինչ որ ձեզ համար հասարակ և պարզ է—մեզ համար խճճուած և մութը...։ Դուք պարծենում էք այն բանով, ինչ որ մենք ծածկում ենք — էլ որտեղից հասկանանք ձեզ։ Ներեցէք խնդրեմ, ոչ կարող եմ ձեզ բարեկամ ճանաչել և ոչ էլ ձեռք մեկնել...։ Գուցէ սա մանր բան է, բայց չէ որ մենք ինքներս էլ մանր մարդիկ ենք։

Ռուդինը իւր զլխարկը պատուհանից վեր առաւ։

—Սերգէյ Պաւլըչ, սխալ ասաց նա.—մենք բարև. ես սխալուած եմ եղել իմ ենթադրութիւններիս մէջ։ Ձմարիտ է, բաւական օտարոտի է իմ այցելութիւնս. բայց ես յոյս ունէի, որ դուք... (Վոլընցևն անհամբերութեամբ չարժուեց)...։ Ներեցէք. ես այլ ևս այդ մասին չեմ խօսիլ։ Այս բոլորը կչռնելով տեսնում եմ, որ դուք իրաւունք ունէք և այլապէս վարուել էլ չէիք կարող։ Մնաք բարև և թոյլ տուէք դոնէ մի անգամ, մի վերջին անգամ էլ հաւատացնելու, որ բոլորովին մաքուր էին իմ նպատակները...։ Հաւատացած եմ ձեր համոզութեան...։

—Արդէն չափն անցաւ, բացականչեց Վոլընցևը և բարկութիւնից ցընցուեց. — ես երբէք չեմ աչխատել որ դուք հաւատ ընծայէիք ինձ, ուստի, այնինչ իրաւունք էլ չունէք իմ համոզութեանս վստահելու։

Ռուդինն ուզում էր էլի մի բան ասել, բայց ձեռքը չարժեց, գլուխ տուաւ և հեռացաւ. իսկ Վոլընցևը վեր ընկաւ դահլիճակի վրայ և երեսը պատին չուռ տուաւ։

—Կարելի է մանել, դռան ետևից լսուեց Ալիքսանդրա Պաւլովնայի ձայնը։

Վոլընցևն իսկոյն չպատասխանեց, և գաղտագողի ձեռքով երեսը չփեց։—Ո՛չ Սաչա, մի փոքր փոխուած ձայնով ասաց նա.—սպասիր մի փոքր էլ։

—Կէս ժամից Ալիքսանդրա Պաւլովնան կրկին մտնելու դուռնը։

Միխայլո Միխայլըչը եկաւ, ասաց նա.—ուզում ես նրան տեսնել։

—Այո, պատասխանեց Վոլընցևը.—ամէն թող այստեղ դայ։

Լեժնևը ներս մտաւ։

—Ի՞նչ է, հիւանդ ես, հարցրեց նա զահլիճակի մօտ, բազկաթոռի վրայ նստելով։

Վոլընցևը բարձրացաւ, արմունկին յենուեցաւ, երկար, չատ երկար մտիկ տուեց իւր բարեկամի երեսին և բառ առ բառ պատմեց Ռուդինի հետ իւր ունեցած խօսակցութիւնը։ Մինչև այսօր նա ոչ մի բառ չէր ակնարկել իւր դէպի Նատալիան տածած սիրոյ մասին,—թէև զգում էր, որ իւր զգացմունքները նրանից ծածուկ չէին։

—Դու, եղբայր, բոլորովին զարմացրիր ինձ, ասաց Լեժնևը՝ հենց որ Վոլընցևը իւր պատմութիւնը վերջացրեց.—չատ տարօրինակ բաներ ասլասում էի նրանից, իսկ այս...։ Սակայն, այստեղ էլ դուրս է գալիս նրա պատկերը։

—Ախը սա, ասում էր վրդովուած Վոլընցևը.—ողղակի լրբութիւն է։ Բ'ից մենց բռնէի ու պատուհանից վայր գլորէի։ Ուզում էր իմ առաջ պարծենալ, կամ դուցէ վախեցնե՞ւ։ Ինչի՞. ինչ համարձակութիւն է դնալ այնպիսի մի մարդու...

Վոլընցևը ձեռները դցեց գլխի ետևին և լուեց։

—Ո՛չ եղբայր, այդպէս չէ, բոլորովին հանդիստ պատասխանեց Լեժնևը։—Դուցէ չհաւատաս խօսքիս, բայց նա այդ անկեղծ զրդմամբ է արել...։ Հաւատացի՛ր...։ Դա, դիտես, ազնուութիւն և անկեղծութիւն է. բայց այդ, չատ լաւ առիթ էր ներկայանում խօսելու, ճարտարախօսութիւնը ցոյց տալու. ահա թէ ինչ է պէտք, ահա՝ առանց որի մենք չենք կարող ապրիլ...։ Նրա լեզուն, ախ—իւր թշնամին է...։ Դրա համար էլ է, որ նա իւր լեզուի ծառան է դարձել ի։

—Չես կարող երևակայել, թէ ինչ հանդիսաւոր կերպով մտաւ ներս և սկսաւ խօսել...։

—Ի հարկէ, առանց դրան խօ կարիլի չէ։ Նա նոյն իսկ սիրթուքը այնպէս կըկոճկէ, որ կարծես մի սրբազան պարտականութիւն է կատարում։ Եթէ ինձ մնար, ես նրան կըձգէի մի անբնակ կղզի և մի անկիւնից էլ մտիկ կըտայի, տեսնես ինչպէս կըկատաղէր։ Մինչդեռ ինքն անգադար պարզութեան վրայ է խօսում։

—Բայց ի սէր Աստուծոյ, ասա ինձ եղբայր, հարցրեց Վոլընցևը.—ինչ բան էր դրա այդ արածը, փիլիսոփայութիւն է, բայց միւս կողմից էլ—ոչ։ Ամեն մի յիմարութիւն փիլիսոփայութեան վրին փաթաթել էլ կարելի չէ։

Վոլընցևը նայեց նրան։

—Բայց սուտ չասաց նա արդեօք, ինչ ես կարծում։

—Ո՛չ, նա չէ խաբել։ Բայց գիտես ինչ։ Բաւական է նրա վրայ խօսելը։ Ե՛կ, աւելի լաւ է չիրտխներս լցնենք և Ալիքսանդրա Պաւլովնային էլ այստեղ կանչենք... Նրա ներկայութեամբ խօսելն էլ լաւ է, լսելն էլ հեչտ։ Նա մեզ թէյ էլ կըխմացնի։

—Լա՛ւ. պատասխանեց Վոլընցևը։—Սաչա, մտիր, կանչեց նա։

Ալիքսանդրա Պաւլովնան մտաւ ներս։ Վոլընցևը բռնեց նրա ձեռքը և ուժգին սեղմեց իւր շրթունքներին։

Ռուդինը հոգու անորոչ և տարօրինակ դրութեամբ վերադարձաւ տուն։ Նա նեղանում էր իւր վրայ, յանդիմանում էր իւր աններելի հապճեպութեան համար։ Ի զուր չէ մէկն ասել, թէ մարդուս ոչ մի բան այնքան չէ տանջում, ինչքան իւր՝ նոր գործած յիմարութեան գիտակցութիւնը։

«Սատանան դրդեց ինձ այդ կալուածասիրոջ մօտ գնալու։ չչնչում էր նաատամների միջով։ Որտեղից էլ միտս եկաւ։ Հենց դիտմամբ լրբութիւններ եմ լսում միայն...։

Իսկ Դարիա Միխայլովնայի տանն էլ մի տարօրինակ բան էր կատարուում։ Ամբողջ առաւօտ տանտիկինը չէր երևում ճաշի էլ չեկաւ։ Պանդալևսկու — միակ անձը՝ որ ազատ մուտք ունէր նրա մօտ—խօսքով, նրա գլուխն էր ցաւում։ Ռուդինը համարեա Նատալիային էլ չտեսաւ. նա m-lle Boncourt-ի հետ նստել էր իւր սենեակում...։ Սեղանատանը պատահելիս Նատալիան մի այնպիսի տխրութեամբ նայեց նրան, որ Ռուդինի սիրտը հենց ուզում էր տրաքուի։ Նատալիայի դէմքը փոխուել էր. կարծես երէկի օրից մի անբաղդութիւն եկած լինէր գլխին։ Անորոչ նախազգացման թախիծը տանջում էր Ռուդինին։ Մի կերպով ժամանակն անցնելու համար նա սկսաւ խօսել Բասիստովի հետ և տեսաւ, որ դա տաք և եռանդուն, փայլուն յոյսերով և կուսական հաւատով մի անձն է։ Երևկոյեան Դարիա Միխայլովնան երկու ժամի չափ ընդունարանում էր։ Նա դարձեալ քաղցր էր Ռուդինի հետ, բայց կարծես թէ մի վիրք հետևւ էր բռնում իրեն և երբեմն ծիծաղում էր, երբեմն խոժոռւում. խօսում էր քթումը և այն էլ մեծ մասամբ ակնարկութիւններով...։ Հենց գիտենաս տեղն ու տեղը պալատական կին էր դարձել։ Վերջին ժամանակներս կարծես մի փոքր սառած լինէր Ռուդինից.—«Սա ինչ հանելուկ է» մտածում էր Ռուդինը, մի կողմից նրան մտիկ տալով։

Հանելուկի բացատրութիւնը չատ չուշացաւ։ Դիշերուայ ժամը տասներկուսին իւր սենեակը վերադառնալիս նա մութ միջանցքումն էր անց կենում։ Յանկարծ մէկը նրա ձեռքը մի տոմսակ դրեց։ Նաեը դարձաւ, տեսաւ որ մի աղջիկ հեռանում էր. նրան թուաց, թէ Նատալիայի աղախինն էր դա։ Նա մտաւ իւր սենեակը, դուրս ուղարկեց ծառային, բաց արեց տոմսակը և Նատալիայի ձեռքով գրուած հետևեալ տողերը կարդաց.

«Վաղն առաւօտեան ժամը եօթին, ոչ ուշ, եկէք մայրի անտառի ետևը, Աւդիուխին լճակի մօտ։ Որ և իցէ ուրիչ ժամանակ անկարելի է։ Այս կըլինի վերջին տեսութիւնը և ամեն բան վերջացած կըլինի՝ եթէ...։ Նկէք։ Հարկաւոր է վճռել...։

Ց. Գ. Եթէ չգամ, ասել է այլ ևս միմեանց չենք տեսնիլ. այն ժամանակ ես ձեզ իմաց կըտամ...։

Ռուդինը մաքի ծովն ընկաւ. նա տոմսակը ման բերեց ձեռքի մէջ, դրաւ բարձի տակ, հանուեցաւ, պառկեց՝ բայց չուտով քուն չմտաւ. նա չատ զգաստ քնեց, այնպէս որ, դեռ առաւօտեան ժամը հինգը չկար, որ զարթնեցաւ։

(Կըշարունակուի)

№ 119. Цена 3 коп. Пятница, 13-го Іюня 1893 г. Годъ 1-й. Редакторъ-Издатель Н. Тифлисскій. Типо-Лит. А. Мелик-Шахназарянца. Воронц. Набережн., д. Григорьянц Арх. Шехов.

ՏԵՂԵԿՈՒՏԻՒՆ

Երեւան

Թիֆլիսից հասած թղթերից տեսնում ենք, որ Ղարաքիլիսայի գաւառապետ Ալեքսանդր Ալեքսանդրի Ռոդիոնովը, որ ամիսներ առաջ Ղարաքիլիսայի գաւառապետ էր նշանակուած, ուղարկուած է Ղարաքիլիսայ։

Ռոդիոնովը, որ ամիսներ առաջ Ղարաքիլիսայ